

ՎԱՐ-ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ԱՐԵՒՏՐԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԽԱԿԱԱՆ
ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱԱՆ ԱՐԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՏՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միջնադարեան Հայաստանի քաղաքների առեւտրահասարակական կեղրոնների յօրինուածքները (իրենց մի շարք յատկանիշներով) շարունակում էին Հայաստանի հնադարեան քաղաքների միեւնոյն համալիրների կառուցապատման աւանդութիւնները։ Այդ լուսարանելու համար հարկ է ամփոփ անդրադառնալ Հայկական հնադարեան քաղաքների կեղրոնների մասին մեզ Հասած տեղեկութիւններին։

Հնադարեան Հայաստանի քաղաքների առեւտրահասարակական կեղրոնները՝ կազմաւորուած պաշտամունքային եւ տարբեր քնոյթի հասարակական չէնքիրով, իրենց ճարտարապետական յօրինուածքով ունեցել են ընդհանրութիւններ հելլենիստական քաղաքների կեղրոնների հետ, որովհետեւ այս ցընանի Հայաստանում քաղաքները զարգացել են հելլենիստական ճարտարապետութեան եւ քաղաքաշինական արուեստի ազգեցութեամբ։ Դրա ապացոյցները շատ են՝ ինչպէս, Գառնիի հեթանոսական տաճարին եւ արքունական ապարանքի մնացորդները, Արմաւիրի յունարչն արձանապրութիւնները եւ կ. Մ. Տիրեւրի մօտ տեղ գտած այլ տեղեկութիւնները քաղաքի յատակագծի մասին (1, էջ 115–116)։

Արտաշատ քաղաքի տեսքը եղել է այնպիսին, որ թոյլ է տուել Պլուտարքոսին պնդելու, թէ նրա հիմքում ընկած է եղել յատակագրծային կանխամտածուած լուծում (մի տեսակէս, որ սկսում է ճշտուել տեղում կատարուող պեղումների արդիւնքներով) (2, XXXI)։ Անշուշտ քաղաքը պիտի կառուցուած լինէր ըստ Ժամանակի հելլենիստական քաղաքաշինութեան սկզբունքների՝ կանոնաւոր յատակագրմամբ, «ագորա»յի նախատեսուած տեղաբաշխմամբ ու ցը-

ջապատուած լինէր հզօր պարիսպներով։ Հէնց այդ հանգամանքներով էլ հիմք են տուել նոյն Պլուտարքոսին յիշատակելու Արտաշատին հռոմէացիների կողմից տրուած «Հայկական Կարթագինէ» անուանումը (2, XXXV), իսկ Ստրաբոնին ասելու, որ Արտաշատը գեղեցիկ շինուած-մնակեցուած երկրի թագաւորանիստ քաղաքն է (3, էջ XVI)։

Ակադեմիկոս Յ. Մանանչեանը խօսելով Տիգրանակերտի մասին, գրում է՝ «... ամենահաւասարին այն է, որ նա իր յատակագծով ու առեւտրա-արհեստաւորական նկարագրով շատ քիչ էր տարրերուում հելլենիստական տիպի քաղաքներից» (4, էջ 66)։

Եենուելով ՊոՓորդի, Պարքըրի, Լանկլուայի, Զինհացքֆի, Քերդմանի եւ Դեւիսի ճանապարհորդական տեղեկութիւնների վրայ, Հ. Ղ. Ավիշանը Պոմպէոսովով քաղաքի մասին հաղորդում է՝ «Ի ժամանակի Միհրդատեան պատերազմաց՝ Արշակունի աշխարհակալ մեր Տիգրան՝ նիզակակից աներոյն եւ վրէժխնդիր հռովմայեցոց՝ յասեր դարձոյց եւ զԱռլի, այլ յետ ոչ բազում ամաց եկեալ Պոմպէի ընդդէմ նորա եւ Պոնտացոյ դրաւեաց եւ ետ վերականգնել զքաղաքն, յիւր անուն կոչելով Պոմպէոսովիս» (5, էջ 349-50)։

Պոմպէոպրլսի յատակագծային յօրինուածքը (գծ. 1) ունի հռոմէական նկարագիր, հետեւարար քաղաքաշինականօրէն նա որոշ չափով նման էր հայրենիստական սկզբունքներին։ Քաղաքի հիւսիսից հարաւ՝ աւագ դարպասից դէպի կիսաշրջանաձեւ նաւահանգստի կերպոնը, երկարում էր սիւնազարդ փողոցը (ալտեկեր ա)։ Կորնթական կանոնով զարդարուն սիւնասրահների երկայնքով գտնուում էին բազմաթիւ քանդակներով յարդարուած հասարակական եւ պաշտամունքային շէնքեր (բ), իսկ դէպի արեւելք՝ մի ամփիթատրոն (գ)։ Լաւ են պահպանուած եղել քաղաքի պարսպապատերը ու երեսունից աւելի բրդաձեւ աշտարակները . . . Պոմպէոսովիս բնակեցուած է եղել մինչեւ 525 թուի երկրաշարժը, որից յետոյ վքուել է՝ թողնելով իր անցեալի աերձանքի մասին պատմող ճարտարապետական յուշարձանների մնացորդները՝ որպէս մնոյց հելլենասէր Տիգրանի ժամանակակից քաղաքաշինութեան, որ իր յօրինուածքով արտացոլում է հնադարեան Հայաստանի ճարտարապետութիւնը եւ քաղաքաշինութիւնը։

Վերոյիշեալներից կարելի է հետեւցնել որ, ինչպէս նշում են մասնագէտների գերակշռող մասը, հնադարեան Հայաստանի քաղաքների յօրինուածքների հիմքում ընկած են եղել հելլենիստական սկզբաւնքներ։ Դրանց վաղ շրջաններից տարածուած լինելու մասին են վկայում՝ Արտաշատի պեղումների բացայցատած տուեալները, կամ նոյնիսկ աւելի առաջ անցնելով, Վասպուրականի տարածքում գրտնուած «Ծառնակի թեփէ»ի (Ծիծեռնակի) պեղումները։ Վերջինը Ս. Ա. Բուռնէի եւ Կ. Ռ. Լաւուսոնի կողմից վերագրեւում է ուրարտական ժամանակաշրջանին (6), սակայն քաղաքի յատակագծի փոքր ինչ

ուշաղդրութեամբ զննումը (տես գծ. 2) պարզում է դրանում Դեկումանուսի եւ Կարդոյի առկայութիւնը, մի հանգամանք, որ Հայաստանում միմիայն վերագրուել է հեղենիատական քաղաքաշինութեամբ։ Այսինքն, ճամարտացի է այն կարծիքը, որ տուեալ օրինակը հնադրեան է եւ մեծ հաւանականութեամբ հայկական։

Այժմ, անդրադառնալով ուսումնասիրուղ զըջանի քաղաքների կեղրուններին, կարեւոր է նշել այն տեղեկութիւնը, որ յունա-հելլենիստական բնակավայրը կարելի էր պոլիս անուանել, եթէ մի շարք յատկանիշների հետ միասին ունէր նաեւ քաղաքապետական հաստատութիւններ՝ տաճարներ, թատրոն, զերմուկներ, երբեմն փողերանց, գանձատուն, գործոց տներ, կարաւանատներ, առեւտրական հրապարակներ (7, էջ 69), որոնք սովորաբար խմբաւորում էին քաղաքների առեւտրահասարակական կեդրուններում՝ «աղորացներում կամ «Փորումշներում»։

Վերջինի օրինակները շատ են Փոքր Ասիայի հնադրեան քաղաքների՝ Միլեթոսի, Պրեգամոնի, Պրիենէի եւլուն. կեդրուններում (8, էջ 297-363) կամ հայեւան Սիւրիայի հիւմիսային սահմաններում պահպանուած, Անտիոքի եւ Բերիայի միջեւ տարածուող բնակավայրերում՝ Դարկիստայում, Բարիսկայում, Բառլիքում, Թել Ակապլինում, Քաֆար Լուտինում (9, Pl. 21-25)։ Ամենայն հաւանականութեամբ վերը յիշատակուած քաղաքների օրինակները դուզահեռ են Հայկական հնադրաբեան մայրաքաղաքների կեդրունների յօրինուածքներին ու շինութիւնների ճարտարապետութեանը, նկատի տևենալով, որ Փոքր Ասիայի, Սիւրիայի եւ Հայաստանի ճարտարապետութեան ընդհանրութիւնները բարձրից նշուած են մասնադիտների կողմից (10, էջ 192)։ Քաղաքապետական կեդրունների մասին եղած վերոյիշեալ արտայայտութիւնը ընդունելի է նաեւ Հայկական հնադրեան շրջանի քաղաքների համար, մանաւանդ որ այս ժամանակաշրջանում է Հայերէն լեզուն հարստանում «շուկայ», «խանութ», «թատրոն» եւ այլ օտար բառերով (11, էջ 812-13), ինչպէս նաեւ նոյնաիսի կառոյցների գոյութիւնը նրանցում հաւաստում է մատենադրական հաղորդումներով եւ հնադիտական ափեղումների առայժմ սուզ արդիւնքներով։ Օրինակ՝ մատենադրական ադրիւնքներից յայտնի է, որ Արտաշատ քաղաքը ունեցել է՝ թատրոն, փողերանց, գանձատուն (12, էջ 78)։ Այստեղ սկսուած պեղումները վերահաստատում են պատմիչների տեղեկութիւնները, որ քաղաքատարածութեան նպատակայարմար ընտրութիւնն ու նրա կառուցապատումը՝ կատարուել է քաղաքաշինական միասնական մտայդացմամբ։ Նրա պարսպապատերի միջեւ տարածուող մասերը ծառայել են որպէս զինուորների բնակարաններ եւ երկաթագործական արհեստանոցներ։ Քաղաքի պեղումների հաշուետուութեան մէջ նշուած է, որ Ցրդ բլուրն իր յօրին-

ուածքով նման էր եղել առաջինին, նրանք երկուսն էլ կառուցապատուել են միասնական կանոնաւոր յատակածմամբ (գծ. 3): Բայ որում, ինչպէս պարզուել է՝ եթէ առաջին բլուրը ունեցել է զինուորական նկարագիր, ուժերորդը եղել է աշխատաւորական թաղամաս: Այստեղ բացուել են բաւականին թուով արհեստանոցների մնացորդներ եւ մի բաղնիք (13, էջ 18-19): Վերջին տեղեկութիւնների համադրում մի անգամ եւս հաստատում է այն ենթադրութիւնը, թէ քաղաքում եղել են կարաւանատներ եւ կարաւանային առեւտրին ըստ պասարկող տարրեր չէնքերի խմբաւորումներ բովանդակող առեւտրական հրապարակներ (7, էջ 100):

Նմանութեամբ Արտաշատին, Հայաստանի միւս հնագրեան քաղաքներից՝ Տիգրանակերտի բարդաւաճութեան, դեղեցիկ կառուցների մասին է վկայում Պլուտարքոսը (2, XXV): Երուանդաշատի վերաբերող նիսթերից այսուել նշենք Թ. Թորամանեանի, Վ. Մ. Յարութիւնեանի եւ Բ. Ն. Առաքելեանի այն հաղորդումները, որ քաղաքի տեղանքում՝ Արաքս գետի ափին, մինչեւ օրս տարրեր տեղերում, աւերակների մէջ նկատելի են մեծ մակերևս զբաղեցրած չէնքերի մնացորդներ (14, էջ 92 հմ. 15 էջ 43-46 եւ 16, էջ 248): Իսկ երուանդակերտի գեղեցիկ եւ չքնար յօրինուածքի ու լուսաւոր, ինչպէս աչքի բիբը յիշեցնող շինութիւնների մասին է հաղորդում Խորենացին (17, էջ 267): Ուշ հնադարեան շրջանի վաղարշապատ քաղաքը, բացի պալատական կոթողային շինութիւններից, անուարակոյսունեցել է նաեւ հասարակական, արտադրական, պաշտամունքի եւ աթոռանիստ քաղաքի արժանի այլ կառուցուածքներ, որոնց ճարտարապետական մանրամասների մի քանի բեկորներ բացուել են էջմիածնի Մայր (11, էջ 850-51) եւ Հոփիսիմէի տաճարների (18, էջ 14-16) պեղումների ընթացքում: Հետեւաբար, հնադարեան Հայաստանի քաղաքների քաղաքակետական կեղրոնները ունեցել են առեւտրահասարակական նկարագիր:

Բացայացելու համար հնադարեան առեւտրահասարակական համալիրների յօրինուածքները՝ ընդգծենք, որ հելենիստական շրջանի «ագորա»ներում առեւտրական կառուցները տեղադրուում էին գրնաւոր մեհեանին կից, որոնք աւելի ուշ՝ բիւզանդական եւ վաղարաբական շրջաններում աեղափոխուեցին դէպի քաղաքի սիւնազարդ փողոցներից մէկը, նոյնիսկ մի շարք քաղաքներում գուրս գալով պարիսպների սահմաններից՝ ինչպէս Բաղդադում (19, էջ 57): Տըւեալ տեղաբաշխումը պայմանաւորուել էր ոչ միայն դիցաբանական-աստուածային հովանաւորութեան աւանդոյթով, այլ նաեւ այն հանգամանքով, որ սրբավայրը եւ նրա մերձակայ տարածքները յաճախ պետականօրէն յայտարարում էին անձեռնմխելի (7, էջ 74-76):

Վերոյիշեալ տեղադրական օրինաչափութիւնը նկատելի է ոչ մի-այն դասական յօրինուածք ունեցող հելլենիստական քաղաքների՝ յունական նվիեսոսի, Պերգամոնի, Միլեթոսի, Պրիենէի, Սարդիսի, Հռոմէական Պարմիրայի, Ջերաչի, Լեպոիս Մազնայի «ագորա»-ներում, այլ նաեւ Հայկական հնադարեան քաղաքների առեւտրահա-սարակական կեդրոնների յօրինուածքներում:

Թ. Արծրունին Արտամետ քաղաքի կառուցման կապակցութեամբ հաղորդում է՝ «իսկ երեք մասին ճիշդաւորուած փոքր ու գոգածեւ հովտում, փորուածքի միջոցով կառուցեց (Արտաշէս թագաւորը կ. Դ.) բարձրաբերձ աշտարակ եւ նրա վրայ կանգնեցրեց Արտողիկի պատկերը, իսկ մօտակայքում գանձատուն..., նոյն տեղում հիմնեց ամէն տեսակ բարիքներով՝ զեցուն ու յարմարաւէտ վաճառափողոց-ներ» (20, էջ 74): Տեղեկութիւն կայ նաեւ այն մասին, որ Տիգրա-նակերտի միջնաբերդի շուրջ կառուցուած մն եղել ստրկատիրական աւազանու դղեակները, պաշտամունքի, հասարակական, մշակութա-յին (թատրոն) եւ այլ կարգի չէնքերը: Միեւնորն սկզբունքով է կա-ռուցապատուել նաեւ Վաղարշապատը (21, էջ 64). Նրանում եղած «վաճառացն քաղաք»ի մասին տեղեկացնում է Աբաթանգեղոսը (22, էջ 43): Ս. Տ. Երեմեանը Հնադարեան ամրոցների վերաբերեալ տե-ղեկութիւնները ընդհանրացնելով ասում է, որ նրանք նեղ իմաստով համարում էին քաղաք, այսինքն, պարսպապատ բնակվալյոր: Ամ-րոցի շուրջը ընդարձակ տարածութիւններ էին կազմում նրա թաղա-մասերը, որոնք յայտնի էին «աւան» բառով: Այս աւաններում էին դանուոց քաղաքացիների գործոց տեղերը, որտեղ բնակիչները զբաղ-ւում էին արհեստագործութեամբ եւ առեւտրով (11, էջ 812):

Ենելով վերեւում քերուած փաստերից կարելի է եղբակացնել, որ ինչպէս տարբեր երկրների հելլենիստական ժամանակաշրջանի քաղաքներում, Հայաստանում եւս առեւտրահամարակական կեդրոն-ների բաղկացուցիչներն էին զանազան հասարակական չէնքերի շար-քում, բայց նրանցից որոշ չափով մեկուսացուած՝ շուկան իր խա-նութերով եւ զիմաստոր սրբավայր մեհեանը, որուն տեղադրուած կուրքի հովանաւորութեան ներքոյ էին գտնուում քաղաքի հարստու-թիւնը՝ զանձատաներն ու վաճառափողոցները, տեղաբաշխուած քա-ղաքի թաղամասերի միջեւ, փոքր ինչ չեղուած գէպի ամրոցը:

Սարկատիրական հասարակութեան կործանման հետ անկում ա-պրեցին եւ անհետացան այդ ժամանակաշրջանի շուրջ երկու տաս-նեակ քաղաքներ եւ գիւղաքաղաքները: Նրանց փոխարէն միջնադար-եան Հայաստանում առաջացան եւ կազմաւորուեցին կամ վերակազ-մաւորուեցին նոր բնակավայրեր, որոնց զարգացումը անմիջապէս կապուած էր նոր հասարակարգի զարգացման օրինաչափութեան հետ: Այդ հանգամանքը, անխուսափելիորէն ծնեց բնակավայրերի կառու-

շապատման քաղաքաշինական նոր կառուցուածք: Այսինքն, հնագարեան հայկական քաղաքներից դէպի միջնադար անցան ոչ թէ առեւտրահասարակական համալիրներ, այլ նրանց կառուցապատման որոշ սկզբունքներ՝ ինչպիսին էր նախորդ էջերում դուրս բերուած հնադարեան առեւտրահասարակական կեդրոնների յօրինուածային օրինաշափութիւնը որ իր նոր արտայայտութիւնն է գտնում նոր աւատապետական քաղաքաշինական համակարգում:

**ՎԱՂ-ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԸ**

Վաղ-միջնադարեան Հայաստանի համար քնորոշ էր այն, որ երկրի քաղաքների մեծամասնութիւնը Դ.-Ը. դարերում վերածուել էին բերդ կամ ամրոց ունեցող աւանների, պահանելով քաղաքի իրաւասութիւնը, եւ ինչպէս հին, նոյնարիշ նոր քնակիշները այստեղ հաստատում էին «Բատ պայմանի քաղաքականաց» (23, էջ 118): Այս ժամանակաշրջանում Հայաստանում առաջացան ու զարգացան ընդամենը երեք քաղաք (գծ. 4), նրա առաւել արդաւանդ ու խիտ բնակչութիւն ունեցող տարբեր նահանգներում, Դուինը՝ հիւախ-արեւելեան Հայաստանում (Արարատեան դաշտալյացրում), Թէոդոսուպոլիսը՝ հիւախ-արեւմտեան Հայաստանում, եւ Նիրկերոը հարաւարեւմտեան Հայաստանի Աղձնիք նահանգում:

ԹԷՂԴՈՄՍՈՒՊՈՒԹՊՈԼԻՍ (Կարնոյ քաղաք, Կալիկալա - գծ. 5): Մասնագէտների եւ ճանապարհորդների կողմից յաճախ ընդունուել է կարին քաղաքը բաժանել հնագոյն, հին եւ նոր մասերի: Բատ մեզ հասած տեղեկութիւնների՝ հնագոյն Կարինը համապատասխանում էր Թէոդոսուպոլիսին (433-1048 թթ.): (24, էջ 7):

Հնադոյն Կարինը գտնուելով պաշտպանողական յենակէտ՝ ամրոցի շուրջը, հանդիսանում էր քաղաքի շառաւղաշրջանաձեւ յատակադըծային կառուցապատման կեդրոնական մասը: Հ. Ղ. Ալիշանը խօսելով նշուած տեղի մասին հաղորդում է՝ «Փ մնացուածա հին շինուածոց քաղաքին՝ որ հարկ է թէ չէին սակաւք, այժմ նշանաւորք բերդն ստուարապարիսպ՝ Գարա-գալէ կոչեցեալ, յոր անուն եւ քաղաքն Գալիգալէ կոչէր յԱրաբացոց եւ միջնարերդն Խչդալէ, յորում ապարանք կուսակալին եւ զինարան ձէպիսանէ . . . Պարիսպ միւս ածեալ է գրերդան, եւ մէջ երկոտուն զպարապացն Հիսար-պիչէն կոչեցեալ՝ դատարկ է, երկոքին եւս ունին աշտարակս կամ բրդունս՝ 62 ընդ ամէն, եւ չորք չորք գրունք պարապացն, եւ խրամ խոր զբերդաւն. երեւին նշմարք եւ ալոյ խրամի հեռագոյն դքաղաքաւն ածեալ, որոյ է

շրջապատ իրեք ժամուգք» (25, էջ 36): Այսինքն հին քաղաքն ունեցել է երկմաս բաժանում եւ չորս դարպասներ, որ յուշում է հնադարեան քաղաքների կառուցածային յօրինուածքը:

Միեւնոյն վայրի մասին չ. Քօսեանը հաղորդում է, որ հին քաղաքի շուրջ իրարից 50-60 մետր հետաւորութեան վրայ փորուած են եղել քարահիւս որմերով փոսեր, եւ տեղ-տեղ ձգուել են քարաշն կամուրջներ: Բներդաքաղաքը արտաքին պարիսպների վրայ ունեցել է չորս դարպասներ՝ արեւելքան, արեւմտեան, հիւսիսային եւ հարաւային կողմերում, յաջորդաբար ճանաչուած՝ «Թավըլիզու», «Երզընկու», «Նոր» եւ «Կիւրճիլ» անուններով (24, էջ 9-10): Հաղորդման մէջ ուշագրաւ է Ալիշանի յիշատակած դարպասների դիրքորոշումը երկրի չորս կողմերի նկատմամբ, որ մի անգամ եւս հաստատում է քաղաքի յօրինուածքի հնադարեան լինելը, յուշելով հին Կարինուած Դեկումանոսի եւ Կարդոյի առկայութիւնը:

Կարինի դիրքը պաշտպանողական տեսակէտից առաւելութիւններ ունենալու հետ միասնական նպաստաւոր էր առեւտրական կապերի համար: Հին ժամանակներից ի վեր նրա վրայով էր անցնում Արեւելքն Արեւմտաքի հետ կապող կարեւոր ճանապարհներից մէկը (26, էջ 228): Է. գարին վերագրուող տաճիկ անանուն աշխարհագիրը յիշատակում է՝ «Կալիկալան մի քաղաք է, որ իր ներսում ունի բաւական ամուր ամրոց... այսուղ առեւտրականների թիւը շաա մեծ է» (27, էջ 132): Պատմութիւնից մեզ յայսնի է, որ 752 թուին բիւզանդական կայսր Կոստանդին Ե. Ը (Կոստոնիմոս) զրաւել է Կարինը եւ մեծ թուով հայ արհեստաւորներ ու առեւտրականներ տեղափոխել է կ. Պոլիս եւ միւս արեւմտեան գաւառները (38, էջ 142-143): Արարմատենադիրները քազմից նշում են Կալիկալայի զարգացած գորգագործութեան մասին, նոյնիսկ ասելով, թէ՝ «Կալիկալայում մի տեսակ գորգ են պատրաստուած, որ իր անունով կոչւում է խալի» (28, էջ 19):

Սրանք եւ այլ բազմաթիւ տեղեկութիւններ, հաւաստիացնում են առեւտրական կեանքի գորութիւնը, հետեւաբար եւ առեւտրահասարակական կեղրոնի առկայութիւնը քաղաքում:

Կարինի առեւտրահասարակական կառույցները միշտ էլ գրաւել են ճանապարհորդների ուշադրութիւնը. արդ տեղեկութիւններից հին կարինին վերաբերող նիսթերից այսուեղ նշենք չ. Քօսեանի հետեւեալ հաղորդումը՝ «Բերդիս շուրջը կը տեսնուին արժմ մեծ ու փոքր վաճառատեղիներ, տեղ-տեղ ալ միայարկ եւ կրկնայարկ, մանաւանդ ճառատեղիներ, տեղ-տեղ ալ միայարկ եւ կրկնայարկ, մանաւանդ արեւմտեան կողմը» (24, էջ 8): Ղ. Զարըքը նշում է, որ Կարինի շուկաները հնագոյն շրջաններից եղել են փայլուն, ակնառու եւ եռուն: Հին կարինը իր շատ փոքր տարածքով մէկ ունեցել է՝ բազար-

ների նմանուող ընդարձակ շուկաներ, որոնք իրենց գոյութիւնը պահպանել էին մինչեւ 1914 թուականը (29, էջ 106) :

Առաւել վերոյիշեալներին, Մ. Խորենացին ճշտելով Թէոդոսուսպոլսի առեւտրահասարակական կեդրոնի տեղը քաղաքի կառուցուածքում վկայում է՝ «իսկ քաղաքի մէջ, մի բարձրավանդակի վրայ շինեց բազմաթիւ միթերանոցներ (իմա՝ խանութիւններ), որ կոչեց Օդոստիոն, Օդոստոսի պատուին» (17, էջ 28) :

Ի մի բերելով կարելի է ասել, որ Բիւզանդիայի եւ Պարսկաստանի սահմանագլխին գտնուող Թէոդոսուսպոլիսը յաճախ ենթակայ է եղել պատերազմների : Այդ պատճառով նրա վաղ միջնադարեան առեւտրահասարակական կեդրոնի մասին տեղեկութիւնները սուր են : Սակայն պարզում է, որ քաղաքը լինելով հիմնադրուած կայսրի հրամանով, եւ ոչ առաջացած աստիճանաբար, իր յատակագծային յօրինուածքով ունէր հնագլարեան քաղաքաշինական սկզբունքներ, նկատի ունենալով՝ նրա երկմաս կառուցուածքը, դարպանների թիւն ու տեղակայումը երկրի կողմերի նկատմամբ եւ յատկապէս առեւտրահասարակական կեդրոնի տեղակայումը քաղաքամիջում, որ բը-նորոշ էր «ագորաններին կամ «Փորտամ»ներին :

ՆՓՐԿԵՐԸ (գծ. 6). Նախկին Տիգրանակերտ, Մարտիրոսաց քաղաք, Յուստինիանուպոլիս, Մուֆարղին կամ Մայաֆարկին : Նշանաւոր Տիգրանակերտ քաղաքի տեղում վաղ միջնադարեան ժամանակաշրջանում վերստեղծում եւ քաղաք է դառնուած Մարտիրոսովլիսը (30, էջ 106) : Հիւրցմանը նշում է, որ 591 թուին այն անցնելով պարտիկներից հռոմէացիներին, կազմում էր վերջինների Միջագետքի գաւառի մի մասը՝ ճանաչուած նիրկերտ անունով (31, էջ 124) :

Նիրկերտի քաղաքաշինական կառուցուածքը էական տարրերութիւն չունէր միւս քաղաքներից : Նրա պարապապատ լինելուն եւ վերաբացման մասին հաղորդում է Պրոկոպիոսը (32, էջ 42) : Աւելի ուշ Ալ-Մուզադ-պատին յիշատակում է նրա պարագծային խրամատի եւ գեղեցիկ ու քարաշն լինելու մասին (33, էջ 206) :

Եակուտ՝ Մայաֆարկինը նկարագրելիս տեղեկացնում է, որ նա ունեցել է ութը դարպաններ : Դրանցից բերդաքաղաքի արեւելեան կողմում եղել են՝ արքանների աշտարակին կից գտնուող «Բաբ-ալ-Շահուան»ը, «Կուջի» կամ «Հայելաւոր» դարպանը եւ Սէյֆ-էլ-Դառլ-էլէյի կողմից կառուցուած «Հրճուանքի ու տիբութեան» կամ «Հին պալատի» դարպանը : Հիւսիսային կողմում, պաշտպան վկայի աշտարակի կից է եղել «Բաբ-էլ-Ռաբագ»ը : «Դառնայով դէպի հարաւ, - շարունակում է եակուտ, - բլրի ստորոտում, մեծ պարսկի հարաւամասում, ջրի անցքի մօտ կար նոյնպէս Սէյֆ-էլ-Դառլէյի կողմից կառուցուած «Հրապարակի դուռը» : Նրանից յետոյ պատմէը յիշա-

տակում է Կոստանդին կայսրի հրամանով՝ կառուցուած երեք աշ-
տարակներից՝ «Թաղիայի աշտարակ» և տեղում բարձրացուած Ալի
իրն Վահայի աշտարակը: «Այժմ նրա աւերակ հետքերը, - գրում
նա, - երեւում են ատաղձագործների բաղնիքի մօտ» (28, էջ 715-
713):

Վերջինը նշանակում է, որ «Հրապարակի դարպատի» շրջապա-
տում եղել է ատաղձագործական արհեստաւորական թաղը, իր բաղ-
նիքի հետ միասին: Բացի վերոյիշեալներից, «Եղինակը յիշատակում
է նաև՝ «Մումի աշտարակ» և Արդանի դարպատ»ը, որ ամենայն
հաւանականութեամբ գտնուում էին բերդաքաղաքի հիւսիսային պա-
րբռապատում, հաշուի առեներով երկու քաղաքների փոխադարձ
դիրքն ու Նվիրկերուի հիւսիսային կողմը գտնուող կամուրջով անցնող
առեւտրական ճանապարհի ուղղութիւնը:

Քաղաքի առեւտրահասարակական կեղծոնի մասին ԺԱ. դարի
դրութեամբ (1046թ.) տեղեկութիւններ է հաղորդում պարսիկ մա-
տենագիր Նասիրի Խոսրովը, ասելով, որ քաղաքն ունեցել է ԱՄփիտակ
քարից կառուցուած մի մեծ պարիսպ, որտեղ իւրաքանչիւր իսուու
գազի վրայ կառուցուած է եղել մի աշտարակ...: Քաղաքի արեւ-
մբռեան պարիսպներում եղել է մի դարպատ, որն ունեցել է քարէ
կամար եւ պատրաստուած է եղել երկաթից, առանց փայտի...»:

«Շահրիստանից գուրս, - շարունակում է նա, - կան շուկաներ
իշեւանատաներ եւ բաղնիքներ ու մի մայր մգիկիթ...: Հիւսիսային
կողմից կայ մի այլ արուագձան, որ կոչւում է Մուհադասա և որ նոյն-
պէս քաղաք է չուկաներով, մայր մզկիթով եւ քարեկարդ բաղնիք-
ներով: Այստեղից չորս փարսախ հեռաւորութեան վրայ, Էմիրը մի
քաղաք է կառուցել՝ որպէս նոր առեւտրի վայր եւ կոչել այն Նաս-
րիյէ» (34, էջ 40-41): Վերջինի նպատակը պարզ է՝ լինել աւելի մօ-
տիկ առեւտրական ճանապարհն եւ քաղաքից հեռացնել շուկայական
թոհ ու բուհը, ինչպէս որ արուել է Մանսուրի կողմից հիմնադրուած
Բաղդադ քաղաքում (35, էջ 37):

Նասիրի Խոսրովից հաղորդման մէջ ուշագրաւ է, որ մատենագիրը
շուկաներն ու այլ հասարակական չէնքերը յիշատակում է արուար-
ծաններում, մի հանգամանք, որ մեկնաբանելի է կամ նրանց բացա-
կայութեամբ քաղաքի շահաստանում եւ կամ նրանց գերաճմամբ քա-
ղաքի սահմաններից դէպի արուարձանները: Վերջին ենթադրութիւնը
աւելի մօտ է իրականութեան, քանի որ առաջինը չի համապատաս-
խանում շահաստանի որպէս գործարար կեանքի կեղծոնի կատարած
դիրին՝ բնակալայրի գործողական (Փունկցիոնալ) կառուցուած-
քում, յատկապէս այնպիսի քաղաքում, ինչպիսին էր վաղմիջնա-
դարեան Նվիրկերու:

լացնենք, որ քաղաքում կար հրապարակ, որի սկզբում՝ Ռավիայի աշտարակի մօտ եղել է ատաղձագործների արհեստաւորական թաղը իր բաղնիքի հետ միասին:

Անդրադառնալով առեւտրահասարակական կեղրոնի քաղաքաշինական տեղաբաշխմանը՝ վերեւում քննարկուած բերդաքաղաքի դարպասների դասաւորութեան կապակցութեամբ ուշագրաւ է այն վկայութիւնը, որ Կորոջի դրան երկու կորմերում եղել են՝ արքայական աշտարակը եւ Հին պալատի դարպասը։ Վերջինները մատնանշում են միջնաբերդի բաղկացուցիչ մասերից պալատական համալիրի տեղը, տարածուած պարսպապատ քաղաքի հարաւ-արեւելեան մասում, ուրից փոքր ինչ հիւսիս-արեւմուաք գտնուում էր քաղաքային հրապարակը։ Ինչ վերաբերում է Նասիրի Խոսրովի հիւսիսային արուարձանը քաղաք անուանելուն, դրանից եղրակացնում ենք, որ Նիրկերուում կային առանձին պարսպապատ բնակավայրեր՝ թաղամասեր, որովհետեւ միջնադարում ընդունուած էր քաղաք անուանել միայն պարսպապատ բնակավայրերը (36, էջ 187, եւ 37, էջ 577)։

ԴՈՒԹԻՆ (Դուլէյ, Դէպիլ կամ Դաբիլ, Դուրփիս) (գծ. 7)։ Վաղ միջնադարեան միակ խոշոր վարչական նոր կեղրոնը, որ առաջացաւ աւատապետական Հայաստանում՝ Դութին էր։ Իբրեւ թաղաւորական նստավայր՝ Հիմնադրուելով դեռևս Դ. Պարի առաջին կէտին, Դութինը եւ Զ. Պարերում գառնում է խոշոր քաղաք եւ ճեռք է բերում մայրաքաղաքի նշանակութիւն (30, էջ 71)։ Դրա պատճառը մի կողմից Դութինի վարչաքաղաքական խոշոր կեղրոն, միւս կողմից՝ Սրեւելքի եւ Արեւմուտքի երկրների միջեւ չարունակուող բաւականաչափ աշխոյժ տարանցիկ առեւտրի հանդրուանակէտ լինելն էր։

Շնորհիւ չորս տասնամեակներից աւելի կատարուող պեղումների, Դութինի մասին (Համեմատած այս ժամանակաշրջանի միւս քաղաքների տուեալների հետ), մեզ հասել են ոչ քիչ քանակութեամբ տեղեկութիւններ։ Դատելով դրանցից, վաղ միջնադարեան քաղաքներից՝ Դութինն իր զարգացման օրինաչափութեամբ կարելի է համարել ամենատիպայինը։ Նրա քաղաքաշինական գործողականութեան կառուցուածքը լինելով հարազատ՝ միջնադարեան քաղաքների յօրինուածքին, ունի նաեւ իւրայատուկ ճարտարապետական եւ քաղաքաշինական նկարագիր։

Աղ-Մուկադդասին բնութագրելով քաղաքը, հաղորդում է, որ Դութինը ամրացուած քաղաք էր եւ միջնադարերդ ունէր։ Նրա հրապարակները խաչաձեւ էին, աները կառուցուած էին աղիւսից եւ քարից։ Քաղաքն ունեցել է բազմաթիւ դրաներ, որոնցից յիշատակում է՝ Բաբ կիյդարը, Բաբ Անին եւ Բաբ Թիֆլիսը։ Եետոյ աւելացնում է, թէ նա շրջապատուած է եղել արուարձաններով, այդիներով ու աքան-

չելի վարելահողերով... (38, Գ 19) : Նոյնը կրկնում է նաև իրն զառկալը (39, Էջ 244-248) :

Վ. Մ. Ցարութիւնեանի, Կ. Ղաֆադարեանի եւ այլոց Դուինի պեղումները ամփոփող ուսումնասիրութիւններում, նրա աւերակները բաժանում են հիմնական երեք խմբեր՝ ա) Դուինի մեծ բլուրը, բ) Կեդրոնական թաղամասը, գ) քաղաքի միւս մասերն ու արուարձանները :

ա. Դուինի մեծ բլուրը. Քաղաքի պաշտպանութեան կեդրոնն էր եւ ազնուականութեան բնակատեղին (նկատի ունենք քաղաքի վաղ շրջանը), որ համարում է նրա ամենահին մասը (40, Էջ 30) : Այստեղ բացի անկարանքից եւ գանաղան հասարակական շէնքերից, բացուել են նաև նրա վաղ շրջաններին վերաբերող արհեստանոցներ (41, Էջ 24) : Դուինի մեծ բլուրը, որ գրաւում է 10 հեկտար տարածութիւն կազմուած էր միջնաբերդից եւ սոորին բերդից (40, Էջ 24), մի ցուցանիշ, որ միւս միջնաբարեան օրինակներում տատանում է 1,5-7 հեկտարի միջիւ (42, Էջ 27) : Վերջինը վկայում է այն բանին, որ Դուինի մեծ բլուրը նմանութեամբ հին քաղաքների ամրոցներին՝ նեղ իմաստով կարելի է համարել փոքր քաղաք (11, Էջ 813) :

բ. Պարսպապատ քաղաքը. Պեղումները ցոյց տուեցին, որ Դուինի հոչակաւոր շահաստանը բնվանդակող այս մասը իր պարիսաներից ներս պարփակում էր առանձին պարսպապատ թաղամասեր (կեդրոնական, արեւելեան հարաւային եւ արեւմտեան) : Թաղամասերից ամենահինը եւ ընդարձակը՝ դա կեդրոնականն էր (40, Էջ 30) : Պրոկապիոս ընթելով Դուինում, նրա շրջակայ գիւղերն ու աւանները յիշատակելուց յետոյ հաղորդում է, որ քաղաքում կային բազմաթիւ դործասներ ու դործակատարներ (իմա՞ արհեստաւորներ), որոնք առեւտրական նպատակներով բնակւում էին այստեղ (43, Էջ 587, հմմ. 4 Էջ 110-111) : Իրօք, քաղաքում արեւմտեան ու հարաւային թաղամասերում պեղումներով բացուեցին խոշոր խեցեգործական հողոներ (44, Էջ 276), որոնցից հարաւայինը, Բ. Ն. Առաքելեանի կողմից անուանուել է քաղաքի բրուտագործական թաղամասը (45, Էջ 217) : Այստեղ յայտնաբերուել են նաև դարբնի, ոսկերչի, ջուլհակի եւ այլ արհեստանոցներ (30, Էջ 133, 166, 172, 269), հաստատելով նրա գործարար կեանքի կեդրոն լինելու :

գ. Արուարձանները. Նշուել է, որ Դուինի ընդարձակ շահաստանի չուրջ բոլոր ուղղութիւններով մեծ տարածք են զբաղեցրել արուարձանները՝ հիւսիսային կողմում անմիջապէս յարելով միջնաբերդին (40, Էջ 33) : Քաղաքի այս մասում դեռևս պեղումներ չեն կատարուել :

Դուինի եռամաս յատակագծային կառուցուածքում ընկալելի են հնադարեան քաղաքաշինութեան սկզբունքներ, որոնք արտայալուած են քաղաքի ամենահին մասերում (քերգում եւ շահաստանում)։ Անցումը երկմաս հնադարեան քաղաքաշինական տեղաբաշխումից դէպի միջնադարեան եռամաս յօրինուածքը կատարուել է շահաստանի պատրսպարուած թաղամասերի ամբողջական կրկնակի պարսպապատմամբ։ Այսինքն Դուինի Շահաստանի թաղամասերի մեկուսացման սկզբունքը ոչ միայն արդինք էր քաղաքի քաղմաղցի բնակչութեանը (նկատի ունենալով, որ հայկական միջնադարեան քաղաքներից շատերը ունեցել են բազմազդ բնակչութիւն, բայց բերդաքաղաքի յատակագծով մեծ մասամբ բոլորովին նման չեն Դուինի), այլ նաեւ նրանում շարունակուող հնադարեան քաղաքաշինական սկզբունքների։

Հետեւաբար, կարելի է եղբակացնել, որ Դուինը առաջանալով վաղ միջնադարում, իր յատակալութային կառուցուածքով՝ հանդիսանում էր անցում հնադարեանից դէպի միջնադարեանը։ Նրա յատակագծային բովանդակութեան աւելի պարզաբանման համար, զուգահեռներ անցկացնենք քննարկուած նիւթերի եւ կիլիկեան Աղպալիայի վերաբերուող իմա Բաթումայի նկարագրութեան միջեւ*։

Ի մի բերելով՝ Աղալիայի նկարագրութիւնից քաղուած տուեալները, Դուինի պեղումների արդինքները, առեւորահասարակական կեդրոնը շահաստանում տեղադրելու քաղաքաշինական սկզբունքը, աւատապետական քաղաքի առաջացման ու զարգացման օրինաչափութիւնը եւ ուսումնասիրուող համալիրների հնադարից անցած կառուցապատման աւանդույթները, եղբակացնում ենք, որ Դուինում մեծ քաղաք հասկացուաթեան համապատասխանում էր կեդրոնական թաղամասը։ Բոլոր տուեալներով, այն հանդիսանում էր քաղաքի միջ-

* Արար անուանի ճանապարհորդ՝ իմա Բաթուման (ԺԴ. դար) բաւականին կարեւոր քաղաքաշինական տեղեկութիւններ է հազորդում Աղպալիայի մասին։ «... Ամենատեղեցիկ քաղաքներից մէկն է՝ յայտնում է ճանապարհորդը ... նա իր ընդարձակութեամբ ու մեծութեամբ հաւասարում է ամենաբաղմածարդ եւ ամենատեղեցիկ կառուցուած քաղաքներին։ Բնակչիների մէխն մի կարգը բոլորովին անշատուած է միւս կարգերից։ Քրիստոնեայ վանականամենքը բնակուու էին պարսպով շրջապատուած Մինա (նաւահանգիստ) կոյուած վայրում, որի դռները փակուած են գիշերը եւ Ուրբաթի աղօթքի ժամանակ։ Յոյները, որոնք քաղաքի հին բնակիչներն են, նրանցու բնակուու մն առանձին պարսպապատուած մի թաղամասում։ Նմանապէս հրեաներն ու քաղաքի մնացեալ բնակչութիւնը։ Թագաւորը, պետական անձինք եւ ստրուկները, մեկուսացուած միւս վերոյիշեալ կարգերից, ապրում են պարսպապատ քաղաքում։ Քաղաքի մնացեալ ժամանական հասարակութիւնը բնակւած է մեծ քաղաքում, ուր պարսպատունքային չէնքերի կողքին կան բազմաթիւ բաղնիքներ եւ խօս կարգաւորուած լուսականներ։ Քաղաքի ունի մի մեծ պարփակ, որ շրջապատում է այն եւ բոլոր այն տեղերը՝ որ յիշեցինք (ԻԲՆ ԲԱԹՈՒԹԱ, Ճանապարհորդութիւններ, Փարփակ 1853, Գիրք երկրորդ, 255-280)։

աղքային առեւտրահասարակական հոչակաւոր կեդրոնը, ափոռուած՝ վկայարանի, Ս. Գրիգոր եկեղեցու և կաթողիկոսական պալատի շրջապատում, տարածուելով դէպի միւս թաղամասերը։ Այստեղ էր կեդրոնացուած քաղաքի հասարակական եւ գործարար կեանքը, նրա արհեստաւորական-առեւտրական կորիզը։ Վերջնների վաղ միջնադարին պատկանելը համոզիչ է դառնուած, եթէ նկատի ունենանք, որ քաղաքի գոյատեւման ուշ ըրջաններում (զարդացած միջնադարում) գործարար կեանքը փոխադրուել էր սառորին քերդի տարածքը (40, էջ 27), քանի որ շահաստանուած գտնուում կերպոնը 861 եւ 893 թուերի զօրեղ երկրաշարժների հետեւանքով վնասուել էր։

Դուինի առեւտրահասարակական կեդրոնի եւ նրա կառոյցների մասին մեղ հասած տուեանները չափազանց սուլ են։ Քաղաքի կեդրոնի սահմանների մասին դադասիար կազմելու համար, բաւական է այստեղ նշել մղոնագրքի հաղորդած այն տեղեկութիւնը, որ Դըւինից դուրս էին գալիք միջազգային նշանակութեամբ առեւտրական հինգ ճանապարհները։ «Հուտուա էլ-ալամ» աշխարհագրական երկում յիշատակւում է՝ «Դուինը, Արմենիայի կեդրոնը, խոշոր եւ հարուստ քաղաք է. ունի շատ բնակիչներ եւ մեծ թուով վաճառականներ...» (27, էջ 142-43)։ Կիրիկեանը համազրելով Մղոնագրքի տեղեկութիւնները Պրոկոպիոսի յիշուած արտայայտութեան հետ, նշում է՝ «Այսպէս Դուին հոչակաւոր եղած է ոչ միայն աղքային, եկեղեցական եւ քաղաքական վարչութեան բնակավայր յինելով, այլ եւ բաշդաւած կեդրոն մը համազային վաճառականութեան...» (43, էջ 587)։

Հետեւարար, Դուինի առեւտրահասարակական կեդրոնը իր քաղաքինական սահմաններով համապատասխանուած էր միջազգային նշանակութեամբ հանգրուանային կեդրոնների տիպին։ Անդրադառնալով նրա յատակագրային յօրինուածքին, այստեղ կարող ենք նշել Մուգաղլասի հաղորդուածը՝ որ քաղաքի հրապարակները ունին խաչձեւ նկարուածք։ Զուգարկելով վերջինը՝ Դուինի տեղանքի ձեւին եւ Շահաստանի դարպանների դասաւորութեանը, ընկաւում է, որ նրա կեդրոնական համալիրը ունեցել է ոչ զիային՝ այլ համատարած յատակագրային ծաւալատարածական յօրինուածային համակարգ։ Ինչ վերաբերում է այստեղ ընդգրկուած կառոյցների տեսակներին, առ այժմ փաստացի յատակագրային տուեանները սուլ են։ Սակայն պեղումների բացայացտած «նազիստական մնացորդները ցոյց են տալիս, որ Դուինի առեւտրահասարակական համալիրը (նմանութեամբ միւս արեւելեան միջնադարեան քաղաքների օրինակներին), ունեցել է խառն տարբեր նշանակութեամբ չէնքրուով կարմուած յատակագրային կառուցուածք։ Նրանցից մատենադրական աղբիւրներում յիշատակւում են զանազան արհեստանոցներ եւ կենցաղային կարգի չէն-

քեր (արար մատենադիրները յիշատակում են նաեւ գինետների առկայութիւնը քաղաքում) :

ա. Արիեստառական շարքերը. Միջնադարեան քաղաքների արտադրանքի աղբիւր էին հանդիսանում արհեստները (46, էջ 5): Դուինը, լինելով Մերձաւոր Սրբելեքի արհեստագործական մեծ կեղրոններից մէկը, պէտք է որ ունենար համապատասխան բազմաթիւ կառոյցներ՝ արհեստառական շարքեր. դրանց դուրսմեան մասին են վկայում՝ հնագիտական շերտերում պահպանուած, քաղաքի պեղումների ընթացքին բացայալուուած արհեստագործական հարուստ մնացորդները եւ նրանց համապատասխան չէնքերի աւերակները: Այս մասին իրաւացի է Բ. Ն. Առաքելեանի հետեւեալ արտայալուութիւնը. «Դուինում, օրինակ, ինչպէս Անիում, են արհեստառորների առանձին թաղեր եւ շարքեր: Դա կասկածից դուրս է եւ ապացուցւում է Դուինի ամբողջ պատմութեամբ, այժմ էլ, հաստատում է պեղումների արդիւնքներով (քաղաքի միջնարերգից հարաւ դտնուել է կաւագործների թաղը), սակայն, եթէ ամբողջովին քարից կառուցուած Անիում չէնքերի պատերին փորագրուած արձանադրութիւնների մէջ արհեստառական եւ առեւտրական թաղեր քանից յիշատակուած են, ասպա առաւելապէս կաւից կառուցուած Դուինում չէնք դտնում եւ ոչ մի յիշատակութիւն: Բայց դա չի նշանակում, թէ Դուինը չի ասրել այն կեանքով, ինչ կեանքով ասրել է Անին: Ընդհակառակը, արհեստագործութեան եւ համքարութիւնների հարցերում Դուինն էր օրինակ տարիս Անիին (30, էջ 180): Սա աւելի հաւաստի դարձելու նպատակով, անդրադառնանք տուեալ բնագաւառում եղած որոշ աշխատութիւնների եւ մատենադրական աղբիւրների հաղորդած ներքոյիշեալ տեղեկութիւններին:

Դուինում եղած արհեստները ուսումնասիրուել են բազմաթիւ մասնագէտների կողմից. դրանց մէջ ցայտուն տեղ են դրաւում՝ բրուտագործութիւնը եւ արար մատենադիրների կողմից բազմից յիշատակուած հիւսուածքային արտադրութիւնը: Օրինակ՝ Ալ Մուգադդասին ասում է, թէ Դուինից արտահանուում էին բրդի գործուածքներ, գորգեր, մութաքաներ, ծածկոցներ եւ ժանեակներ (38, Գ 19): Վերջինները միասին կարելի է համարել Դուինի արտադրութեան ամենատարածուած բնագաւառները:

Կեդրոնական թաղամասի պեղումների ընթացքին, Յուղա գիւղից ոչ հեռու, քաղաքի հարաւ-արեւելեան պարսպապատերի տակ (ինչպէս վերեւում նշուեց) 1939 թուին յայտնարերում են՝ խոշոր արտադրութեան բրուտագործական հնոցներ: Նրանք համադրուելով հնագիտական այլ տուեալների հետ, Բ. Ն. Առաքելեանի կողմից անուանում են քաղաքի բրուտագործական թաղամասը: Վերջին տարի-

ներում, նոյնպիսի հնոցներ են յայտնաբերուել նաեւ 1950 և 1977 թթ. պեղումների ժամանակ. վերջինը դաշնուել է 7րդ տեղամասի արեւմը մըտեան թաղամասում (46, էջ 135, հմ. 44, էջ 278):

Տեղի ունեցած աւերիչ երկրաշարժերի պատճառով, քաղաքի ուշ շրջանի կեանքը տեղափոխուել է բերդի տարածքը. այստեղ համապատասխան դարերի շերտագրութիւնը թույլ է տուել եղակացնել, որ ստորին բերդի հիւսիս արեւմտեան մասը ծառայել է որպէս չուկայական հրապարակ, նոյնիսկ 1975-1977 թթ. կատարուած պեղումների արդիւնքների մէջ հանդիպում ենք «... որ Դուինի ստորին բերդին սոյն հատուածը արհեստաւորական թաղերից մէկն է, որ նախ քան քաղաքի կործանուածը մօս մէկ հարիսրամեակ ապրուած էր համեստ կենցաղով» (47, էջ 282): Առաւել նշուածներին, վերջին տարիների պեղումները բերդի տարածքում քացայայտեցին՝ ամբողջական մի արհեստաւորական թաղամաս, բաւականին յստակ ընթերցուող յատակագծային ուրուագծով. դժբախտաբար նիւթերը հրատարակուած չկինելու պատճառով՝ դժուար է աւելի տեղեկութիւններ հաղորդել, որի մեկնաբանուածը կարեւոր ներդրում կը լինի տըւեալ բնադրաւորի ուսումնասիրութեան ասպարհութեամ:

բ. Այլ շենքեր. Միջնարբեան կարաւանային առեւտրի իրականութեան մէջ կարեւոր տեղ էին գրաւում կարաւանատները: Սակայն, ուշագրաւ է, որ Դուինուած գեռուեւս յատակօբէն այսպիսի կառուցներ չեն յայտնաբերուել քաղաքի պեղուած տարածութեան վրայ (Շահամատանում), մի հանգամանք, որ ենթադրել է տալիս Յ. Մանաղեանի կարծիքի իրաւացիութիւնը՝ թէ իջեւանատները Դուինուածունուել են արուարձաններում (4, էջ 110): Մանաւանդ, պատմութիւնից կան տեղեկութիւններ այն մասին, որ կարաւանատները երթեամբ համդիսացել են աղքիւր զանազան գաւադրութիւնների (30, էջ 221): Այդ իսկ պատճառով նրանց գտնուելը արուարձաններում (յատկապէս վաղ-միջնադրաբեան Դուինում) կարելի է համարել միանգամայն տրամաբանական:

գ. Դուինի մեծ շուկան. Ե-ի. դու. (գծ. 8). Ս. Գրիգոր եկեղեցուց մի քանի հարիւր մերը հեռաւորութեան վրայ, գէպի արեւմուտք, չափազանց աւերուած վիճակում, 1939 թ. քացուած այս չէնքը ունի եռաթռիչք (կողքեցում 6 մ., մէջտեղում 5,5 մ. լայնութեամբ) եւ ութը յաջորդական 4,5 մ. քայլով սիմային ցանց:

Տեղանքը ամրէի ենթարկուած լինելով, չէնքի շրջապատում կը ըսող որմերի գոյութիւնը յստակ չէ: Սակայն, տեղում եղած սիւների խարիսխների ցանցը եւ չէնքի յատակագծի ճգուած համաշափութիւնը թույլ են տալիս պնդել Կ. Ղափարաբեանի կարծիքի ճշմարտա-

ցիութիւնը, որ շուկան կազմուած է եղել՝ միջանցիկ, պարագային դասաւորութիւն ունեցող խանութիւների չորս շարքերից (48, էջ 107-108): Եղներով սիւների լայնական թոփչքային չափսերից, հաւանական է թւում, որ չէնքը ունէր բաղելիքային կտրուածք եւ նրանում եղած խանութիւները դասաւորուած են եղել՝ արտաքին ու ներքին պարագծերով, կերպնական մասում առաջացնելով աղատ վաճառքի յատկացուած տարածութիւն:


* * *

Վերեւում կատարուած ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս յանգել:


1. Աշխատանքի բաժանման ընթացքը, որ սկզբնաւորել է աւատապետութեան ժամանակաշրջանը, նապատել է արհեստաուրների խմբաւորմանը աւատապետական ամրոցների աստրոտին (Ճորտերի փախուատը դէպի քաղաք): Սպասարկելով քերդի եւ աւանի բնակչութեան, ինչպէս նաև եկուոր վաճառականների պահանջներին, նրանց ձեռնարկութիւնները դրաւում էին միջանկեալ դիրք՝ քերդի եւ ընդարձակուող աւանի միջեւ:

2. Զարդացման այսպիսի օրինաշափութիւնը՝ թելադրում էր քաղաքների կեղրոնների շառաւղաշրջանաձեւ յատակագծային յօրինուածք եւ պահանջում էր՝ անընդհատ աճող ու մեծացող բնակալայրերի համապատասխան՝ ընդարձակուելու ունակութիւններով օժտըւած կեղրոննական համալիրներ: Վերջին հանդամանքը աստիճանարար ծնուած էր առեւտրահասարակական համալիրների համախառն չչնքերով կազմուած յատակագծային փնջային կառուցուածք: Սա ստեղծուած էր փոխարարք առաջական կապ՝ կեղրոնի եւ աճող քաղաքի սահմանների միջեւ:

3. Վաղ-միջնադարեան Հայաստանի քաղաքները գտնուելով աւատապետական յարաբերութիւնների կազմաւորման սկզբնական փուլում, նրանց առեւտրահասարակական կեղրոնները ունեին արհետաւոր-առեւտրական նկարագիր, այսինքն համալիրներում գերիշխում էին արհետաւորական շարքերը (գորգագործութիւնը եւ ուկերչութիւնը թէողսուպւպուում, մետաղագործութիւնը եւ ատաղձագործութիւնը նիդրկերտում, բրուտագործութիւնը, հիւսուածքային արտադրութիւնը եւ այլ բազմաթիւ արհեստները Դոսինում), յիշատակուած երեք քաղաքներից միակ գոյատեւողի՝ կարինի առեւտրահասարակական կեղրոնի բերդատակի տարածքը մինչեւ ուշ ժամա-




Գծագիր 1.- Պոմպէուպոլիսի յատակագիծը, ըստ Հ. Դ. Ալիշանի, «Սիսուան»:
ա. Կարդայ. սիմազարդ ուղի, բ. գամազան հասարակական շենքեր, գ. ամփիթատրոն,
դ. բրդաձեւ աշուարակներ:




Գծագիր 2.- Միծեռնակի քաղաքի յատակագիծը ըստ Burney - Lasonի:


1. ամբող, 2. կարդոյ. սիմազարդ ուղի, 3. Դեկումանոս, 4. բնակելի քաղամասեր:




Գծագիր Յա.- Արտաշատ քաղաքի պեղումների արդիւմֆները, առաջին բլուրի յատակագիրը:



Գծագիր Յթ.- Արտաշատ քաղաքի պեղումների արդիւմֆները, ութերորդ բլուրի յատակագիծը:




Գծագիր 4.- Վազմիշնաղարեան Հայաստանի առեւտրական նամապարհները,
ըստ Յ. Մամինդեանի:




Գծագիր 5.- Թէոդոսուպուլի յատակագիծը:

1. Միջնաբերդ, 2. առեւտրահասարական կենտրոն, 3. Հնագոյն Կարին, 4. Հին Կարին,
5. Նոր Կարին, 6. գլխաւոր փողոցներ, բերդաշաղաքի դարպասները, 7. Երգիկայի դարպաս,
8. Թավրիզու դարպաս, 9. Սարայի դարպաս, 10. Վրացական կամ Գիերչի դարպաս:




Գծագիր 6.- Նիբրիերտ ժաղաքի ուրուազրային յատակագիծը. վերակադրութիւն:


1. ամրոց, 2. պարսպապատ խաղաք, 3. արուարձաններ, 4. գլխաւոր հրապարակ, 5. դարպանական, 6. Արզամի դարպանական, 7. Հայելաւոր դարպանական, 8. հրապարակի կամուրջներ, 9. Բատմանի կամուրջ, 10. ամրոցի կամուրջ, 11. դարպանակի կամուրջ, 12. հարավային մայրուղի:



Գծագիր 7.- Դուին ժաղաքի յատակագիծը, բառ կ. Գ. Ղափալարեանի և Robert Ker-Porterի:
 1. Միջնարերդ, 2. Ստորին բերդ, 3. Կրօնական համալիր, 4. Առեւտրահասարակական կեդրոն,
 5. Մեծ շուկայ, 6. արհեստաւորական բաղեր, 7. դարպասներ, 8. պարսպապատ բաղամաներ,
 9. ընդհանուր պարսպապատներ, 10. արուարձաններ:







1.



2.

Գծագիր Տ.- Գույնի Մեծ շուկան, ըստ կ. Գ. Ղաֆարլարեանի:
1. յատակացիձ, 2. տեղաթի ընդհանուր տեսքը, 3. մանրամասներ:



Գծագիր 9.- Առևտրահասարակական կեդրոնների տեղաբաշխման սկզբումքային ուրուագիծ:
ա. Հիմ բաղաբերի, բ. Վաղ-միջնադարեան բաղաբերի, գ. Թէոդոսուպոլիս, դ. Նվիրկերտ.
ե. Դուին:

1. Միջնաբերդ, 2. Կրօնական համալիր, 3. առևտրահասարակական կեդրոն, 4. դարպաններ.

նակները գրաւում էին նրա հնագոյն արհեստների յատկացուած շաղքեցը։ Այսպիսի օրինաչափութեան առկայութիւնը համեմատելով ժամանակակից արեւելեան քաղաքների զուգահեռ օրինակներով (Կ. Պոլիս, Սիւրիայի քաղաքները...), առեւտրահասարակական կեղրոնների գարդացման այս մասը անուանում ենք՝ համալիրների արհեստաւոր-առեւտրական կորիգը, որպէս նրանց ճարտարապետական, քաղաքաշինական գարդացման առաջին փուլը։

4. Վաղ-միջնադարեան Հայաստանի երեք քաղաքների գործողական տեղաբաշխման վերաբերող տեղեկութիւնները թույլ չեն տալիս յանդել ընդհանրացումների։ Սակայն պարզուամ է, որ թէողոսուազութիւնը լինելով հիմնադրուած քաղաք, իր յատակազծային տեղաբաշխմամբ աւելի մօտ էր հնագարեան սկզբունքներին, այսինքն, ինչպէս հաղորդում է Մ. Խորենացին՝ նրա կեղրոնը գտնեւում էր քաղաքամէջուամ։ Նիդրէրու եւ Դումինը լինելով առաջացած քաղաքներ, նըրանց կեղրոնները զարգացել էին՝ ամրոցի կամ աւատապետական դղեակի եւ նորած բնակելի տարածքի միջեւ, սկզբնաւորուելով Շահաստանի պարսպապատերից ներս։ Ուսումնասիրուած երեք քաղաքների գէպերու էլ ակնյայտ են՝ հնագարեան քաղաքաշինական եւ ճարտարապետական աւանդների յարմարեցումը նոր կազմաւորուող աւատապետական յարաբերութիւնների գործողական պահնջներին՝ հանդիսանալով անցում հնագարեան քաղաքաշինական սկզբունքներից դէպի հայկական քաղաքների երկրորդ ծաղկումը՝ միջնադարեան ժամանակաշրջանը (գծ. 9)։

5. Կեղրոններում ընդդրկուած չէնքերի ճարտարապետութեան վերաբերեալ տեղեկութիւնները զեւ եւա առաջ են։ Սակայն, հիմնուելով՝ Դումինում պեղուած վաճառատան մանրամասների (խարիսխների), կաթողիկոսական պարատի վերակազմութիւններն (կ. դ.), թէողոսուապուրի դիւնանատան կամ մատենագարանի (Դ. դ.) եւ Եակուտի ու Նասիրի Խոսրովի (ԺԱ. դ.) Նիդրէրտի մաքրատաշ շինութիւնների մասին Հաղորդած տեղեկութիւնների վրայ, կարելի է պնդել, որ այս ժամանակաշրջանի քաղաքների առեւտրահասարակական կեղրոններում ընդդրկուած չէնքերը ունէին ճարտարապետական քարքը արժանիքներ։ Դրանք, եթէ պահպանուէին, մեծ հաւանականութեամբ համեմատական կը լինէին միեւնոյն ժամանակների եկեղեցական չէնքերի ճարտարապետական գեղարուեստական յատկանիջների հետ։

ԴԱՒԻԹ ԿԵՐՏՄԵՆՁԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. ТРЕВЕР К. В., Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953.
(ՏՐԵՎԵՐ Կ. Վ., Ավարկ Հիմ Հայաստանի մշակոյրի պատմութեամ, Մուկուս - Լէմինգադ, 1953):
2. PLUTARCHI Vitae Parallelae, vol. IV, Lucul., Paris 1852.
3. Strabonis Geographica, recog. A. Meineke, vol. I-III, Lipsiae 1915-1925
4. Манандян Я. А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954.
(ՄԱՆԱՆԴՅԱՆ Յ. Ա., Հայկական առևտուրի և հաղափնքի դերը միջազգային առարագիկ առևտուրում (Վ մթա - XV դդ.), Երեւան 1954):
5. Հ. Պ. ԱԼԻՇԱՆ, Սփուռամ, Վեճեսովիկ 1885:
6. BURNEY C. A., Urartian fortresses and towns in the Van region, 1957, vol. VII, p. 37-54.
- BURNEY C. A. and G. R. LAWSON, Measured plans of Urartian fortresses, 1960, vol. X, p. 185-188.
7. Ս. Մ. ԿՐԿԵՆՑԱՐԵԱՆ, Հիմ Հայաստանի և Փոքր Ասիայի հաղափնքի պատմութեամ դրուգիմբ, Երեւան 1970:
8. Всеобщая история архитектуры, том 2, Москва, 1973.
(Ճարտարապետութեամ հայրենական պատմութիմ, Հոմ. 2, Մուկուս 1973):
9. TCHALENKO GEORGE, Villages antiques de la Syrie du Nord, T. 2, Paris 1953.
10. Якобсон А. Л., Армения и Сирия архитектурные сопоставления, «Византийский Временник», 1976, том 37, стр. 192-207.
(ԵԿՈԲՍՈՆ Ա. Լ., Հայաստան և Սիրիա - ճարտարապետութեամ համեմատութիմը, «Բիշապական ժամանակագրություններ», 37 (1976), էջ 192-207):
11. Հայ ժողովրդի պատմութիմ, Հոմ. Ա., Երեւան 1971:
12. ՓԱՆՈՍՈՍ ԲԻՆԶԱՆԻ, Պատմութիմ Հայոց, Երեւան 1969:
13. Բ. Ն. ԱՌԱՔԵՆԵԱՆ, Օրոնդ հմ գումառել երուանդաշտ և երուանդակերտ բաղմենք, ՊՀ, 1956, Հմ. 5:
14. Վ. Մ. ԱՌԱՔԵՆԵԱՆ, Օրոնդ հմ գումառել երուանդաշտ և երուանդակերտ բաղմենք, ՊՀ, 1956, Հմ. 5:
15. Վ. Մ. ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ, Հիմ հայաստանի հաղափնչիմական կուլուրայի մասին, «Տեղեկագիր Հայաստանի Գիտ. Ակադ.», 1955, Հմ. 9, էջ 43-67:
16. Թ. ԹՈՐՄԱՆԵԱՆ, Նիւթեր հայկական ճարտարապետութեամ պատմութեամ, Հոմ. Ա., Երեւան 1942:
17. ՄՈՎԱՆԻ ԽՈՐԵՆԱԾԻ, Պատմութիմ Հայոց, աշխարհ. թրդ., Երեւան 1968:
18. Վ. Մ., ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ, Եղմանձիմ, Երեւան 1978:
19. CYRILL MANGO, Byzantine architecture, New York, 1967.
20. ԹՈՎԱՆԱ ԱՐՄՈՒՈՒՆԻ, Պատմութիմ տան Արծրամեաց, Երեւան 1978:
21. Ավարկ հայ ճարտարապետութեամ պատմութեամ, Երեւան 1963:
22. ԱԴԱԲԵԼԻԳԻԱՅ Պատմութիմ, Տիգեր 1882:
23. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԹՂ. ԴՐԱՍԻԱՆԱԿԵՐՏՅՈՒ, Պատմութիմ, Երեւան 1867:

24. Հ. ՍԱԿՈԲՈՍ ՔՈՍԵԱՆ, Բարձր Հայք, Հա. Ա., Վիեննա 1925:
25. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Տեղադր Հայոց Մեծաց, Վենետիկ 1855:
26. Թ. Խ. ԹԱԿՈԲԵԱՆ, Հայաստանի պատմական աշխարհագույքիմ, Երևան 1968:
27. MINORSKY V., *Hudud al-A'lam. The regions of the world*, London 1937.
28. ԵԱԿՈԲԻՏ Էլ, ՀԱՄՈՒԻ, Երկրմերի բառարան, Գիրք առաջին եւ չորրորդ, Լայպցիգ 1924:
29. Ղ. ԶԱՐԲՔ, Կարիմապատում, Յուշամատեան Բարձր Հայքի, Գյուղութ 1957:
30. Բ. Ն. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Քաղաքմերը եւ արիեստմերը Հայաստանում 9-13րդ դարերում, Երևան 1958:
31. Ա. ՀԻՒՂՉՈՐԻԱՆ, Հմեմ Հայաստանի տեղայ անումեր, Բարգմ. Ա. Գ. Պիլեջին-ձեմերի, «Համդէս Ամառեայ», յօդուածաշաբք Ա905-1907 ԲԲ.:
32. PROCOPIUS, *De Bello Persico*, vol. I, II, Paris 1959.
33. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXIX.
(Եփրեկի հասահածյ նուիրուած Կովկասիան բնակավայրերի տեղագրութեան,
Գիրք իթ.):
34. Насир иль Хосрау, Сафарнаме, М-Լ., 1933 թ.
(ԱԱՍԻՐԻ ԽՈՍՐՈՎ, Սաֆարնամե, Մուկոււ - Լենինգրադ, 1933):
35. ՄՈՒՀԱՄՄԱՍ Թ. Մ. Էլ ԱՄԻԿ, Բաղդադ - Մամսուրի կլոր բաղաքը, Բաղդադ 1967:
36. MICHAELIS ATTALIATAE Historia, Bonnae 1853.
37. GEORGI CEDRENI Historiarum Compendium, Bonnae 1893.
38. ՄԱԴԱՐԱՆ ՏԱՐՈՎԱՑ ԱԱՊՂԻԿ, Պատմութեան տիեզերական, Գետերուուք 1885:
39. ԻՐԱՆ ՀԱՈՒՔԱԼ, Գիրք ճանապարհմերի եւ Երկրմերի մասին, Բրիլ 1873:
40. Կ. ՂԱՅԱԴՐԱՅԵԱՆ, Դումի հազարը եւ նրա պեղումները, Երևան 1952:
41. Ա. ՔԱՅԱՆԴՐԵԱՆ, Դումի կենտրոնական բազամասի պեղումները, 1964-1977
թթ., Երևան 1976:
42. Арутюнян В. М., Градостроительство древней и средневековой Армении, автореферат докторской диссертации, Ереван, 1964.
(ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ Վ. Մ., Հմեմ Եւ Միջնադարական Հայաստանի բնակչաշինութիւններ, Առողջապահութեան գոկտորական դժոխտացիալիք, Երևան 1964):
43. Հ. Ս. Էֆրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հա. Ա., Վենետիկ 1902:
44. Ա. Յ. ԲԱՐԱՄԵԱՆ, Խեցեղեմի քրծման հնոց Դասմից, ՊՀԲ, 1979, հա. 1,
275-280:
45. Բ. Ն. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Քաղաքմերը եւ արիեստմերը Հայաստանում, Հա. 2,
Երևան 1964:
46. Якубовский А. Ю., Феодальное общество Средней Азии и его тогопля с Восточной Европой в X-XV вв., мат. по истории узб. тадж. и турк. ССР, Л. 1939.
- (ԵԱԿՈՒԲՈՂՍԿԻ Ա. ԵԽԻ., Միջմին Ասիայի Փէոդալական հասարակագործ եւ նրա
(ԵԱԿՈՒԲՈՂՍԿԻ Ա. ԵԽԻ., Միջմին Ասիայի Փէոդալական հասարակագործ եւ նրա
առեւորական կապերը Արեւելան նրապայի հետ, Լենինգրադ 1939):
47. Ա. Ս. ԺԱԿՈՎԵԱՆ, Բնակելի շենքի պեղումները Դումի առորին քերդում
1975 թ., ՊՀԲ, 1978, հա. 1:
48. Կ. ՂԱՅԱԴՐԱՅԵԱՆ, Դումի հազարը եւ նրա պեղումները, Հա. 2, Երևան 1982:

Résumé

LES CARACTERISTIQUES URBANISTIQUES ET ARCHITECTURALES DES CENTRES COMMERCIAUX ET SOCIAUX DES VILLES DE L'ARMENIE DU HAUT MOYEN AGE

DAVIT KERTMENDJIAN

Après un bref aperçu sur les villes d'Arménie dans l'antiquité païenne, voir Artašat, Tigranakert, Vałaršapat en particulier, l'auteur prend en considération les trois principaux centres urbains de l'Arménie en Haut Moyen Age: T'ēodosoupolis ou Karin, Np'rkert, et Douin. L'auteur arrive aux conclusions suivantes:

1. Les artisans se regroupent aux pieds des châteaux féodaux, dans une positions intermédiaire entre les seigneurs et les commerçants des bourgs qui s'épanouissent, servant en même temps les uns et les autres
2. Cette situation composait le développement des bourgs selon un plan rayonnant, pour faire face aux nouvelles exigences en croissance.
3. Dans les centres commerciaux et sociaux de ces agglomérations urbaines prévalaient les activités artisanales dont les produits constituaient l'objet principal du commerce.
4. Tandis que T'ēodosoupolis avait maintenu un plan plus proche de celui de l'antiquité avec le centre urbain au milieu de la ville, Np'r-kert et Douin avaient eu une évolution plus conforme aux conditions économiques de l'époque, leur centre urbain se trouvant entre le château et les quartiers habités.
5. Bien qu'il reste assez peu de témoignages de l'architecture de ces villes, on peut déduire quand même de ce qui nous est parvenu, que cette architecture civile était d'une haute qualité, qui pourrait très probablement soutenir la comparaison avec l'architecture religieuse de l'époque.